

**ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԵԾՆ ՇԱՀԷՆ,
Եր., Հեղինակային հրատ., 2011, 732 էջ***

Անցյալ դարավերջի Արցախյան գոյամարտում նվաճված պատմական հաղթանակի մեջ չափազանց կարևոր է Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական մարտերի դերն ու նշանակությունը, որոնցում ծանրակշիռ ներդրում է ունեցել պետական, քաղաքական և ռազմական գործիչ **Շահեն Մեղրյանը**:

Ընթերցողի սեղանին դրված Ա. Պետրոսյանի «Մեծն Շահեն» աշխատությունը Շահեն Մեղրյանի կյանքի ու գործունեության ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է հայ պատմագիտության մեջ: Պատկառելի ծավալ և ժամանակագրական լայն ընդգրկում ունեցող նման աշխատություն ստեղծելու անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ Շահեն Մեղրյանի հերոսական կյանքը և այդպես էլ անավարտ մնացած գործը պատշաճ գնահատականի չեն արժանացել ո՛չ Արցախյան գոյամարտի տարիներին և ո՛չ էլ նրա ողբերգական մահից հետո:

Հեղինակն իր շարադրանքում լայնորեն օգտագործել է Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական մարտերի մասին ժամանակի պարբերական մամուլում հրապարակված նյութերը, ռազմական գործողությունների մասնակիցների և ականատեսների վկայությունները, արխիվային վավերագրերն ու առանձին ուսումնասիրությունները:

Ներածության մեջ Ա. Պետրոսյանը ներկայացրել է Շահումյանի հիմնախնդրի էությունն ու բովանդակությունը, նրա ուսումնասիրվածության աստիճանը և հիմնավորել այն համակողմանիորեն լուսաբանելու առաջադրանքի գիտական և արդիական նշանակությունը: Այս բաժնում հեղինակը տվել է նաև Շահեն Մեղրյանի մարդկային և գործնական հատկանիշների բնութագիրը: Նա համակողմանի զարգացած հզոր անհատականություն էր, իր դիրքորոշումների մեջ անկողմնակալ, ազնիվ էր, նպատակամետ և հույժ գործնական, ուստի շատ արագ ձեռք բերեց հարազատ ժողովրդի վստահությունը և դարձավ նրա առաջնորդը:

Իր առջև դրված ծավալուն առաջադրանքը հաջողությամբ իրականացնելու համար աշխատության **առաջին մասում**, որը բաղկացած է երեք գլուխներից, Ա. Պետրոսյանը շարադրել է Գյուլիստանի մեղիքության համառոտ պատմությունը,

*Ընդունվել է տպագրության 20.12. 2011:

ներկայացրել նրա դերն ու նշանակությունը Արցախի պատմության տարբեր ժամանակահատվածներում: Այնուհետև Ա. Պետրոսյանը ընթերցողին է մատուցել Մեղրյանների գերդաստանի պատմությունը՝ Մեղրի պապից մինչև Շահենի հայրը՝ Զինավոր Մեղրյանն իր բազմանդամ ընտանիքով (4 աղջիկ և 7 որդի): Զինավոր Մեղրյանի հայկական ավանդապահ ընտանիքում է ծնվել, դաստիարակվել և կյանքի հետագա ուղին անցել Շահեն Մեղրյանը:

Հայրենի Գյուլիստանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Շահենն ընդունվել և հաջողությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Հարազատ հողի կանչով վերադառնալով Շահումյան, նա սկսել է իր աշխատանքային գործունեությունը՝ զբաղեցնելով հասարակական, պետական և կուսակցական պատասխանատու պաշտոններ: Ընտրվել է Շահումյանի շրջգործկոմի նախագահ և կուսշրջկոմի առաջին քարտուղար:

Աշխատության երկրորդ մասը նվիրված է Շահումյանում ազատագրական պայքարի ծավալման պատմությանը: ԼՂԽՄ Մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո անհրաժեշտ էր համախմբել հայ ժողովրդի ողջ ներուժը՝ արցախահայության արդար դատին աստար կանգնելու համար: Ակնհայտ էր, որ հիմնախնդրի լուծման միակ ճանապարհը զինված պայքարն է, որը կազմակերպելու առաքելությունը Շահումյանի շրջանում իր վրա վերցրեց Շահեն Մեղրյանը՝ իր գաղափարակիցների ու զինակիցների հետ արդեն 1990 թ. անդամագրվելով ՀՅ Դաշնակցությանը:

Շահենի առաջարկությամբ ստեղծվեց Ինքնապաշտպանության շրջանային խորհուրդ՝ իր իսկ նախագահությամբ: Առաջնահերթ խնդիրներն էին կամավորականների գրանցումը, մարտական ջոկատների ստեղծումը, զենք-զինամթերքի հայթայթումը: Եվ այս ամենը պետք է իրականացվեր պարետային ռեժիմի պայմաններում: Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում մեծ էր նաև Հայաստանի Հանրապետությունից ժամանած մարտական ջոկատների դերը: Շահենին հաջողվեց համակարգել տեղի և Հայաստանից ժամանած ուժերի համատեղ գործողությունները:

Աշխատության երկրորդ մասում մեծ տեղ է հատկացված նաև 1990-1991թթ. ռազմական գործողությունների պատմությանը (Մանաշիղ, Գետաշեն, Մարտունաշեն, Էրբեջ, Բուզլուխ և այլն): Հատկապես ուշագրավ են տխրահռչակ «Օղակ» գործողությանը նվիրված նյութերը, գործողություն, որի արդյունքում հայաթափվեցին Գետաշենը, Մարտունաշենը և երկու տասնյակից ավելի հայկական այլ բնակավայրեր: Հեղինակը փորձել է բացատրել, թե ինչ՞ու խորհրդային բանակը ադրբեջանական ՕՄՕՆ-ի ուղեկցությամբ իրականացրեց այդ գործողությունը, ի՞նչ պատճառով Գետաշենի ինքնապաշտպանները և խաղաղ բնակչությունը հայտնվեցին արտաքին աշխարհից մեկուսացված վիճակում և ո՞ր էին նայում ու ի՞նչ քայլեր ձեռնարկեցին Հայաստանի իշխանությունները: Եվ միայն Շահենի ու նրա ընկերների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ Գետաշենից և Մարտունաշենից դուրս բերել նահատակված ազատամարտիկների (Թաթուլ Կրպեյան, Սիմոն Աշիկյոյան և ուրիշներ) դիակներն ու փրկել խաղաղ բնակչությանը վերահաս կտորածից՝ տեղափոխելով Շահումյանի շրջան:

Աշխատության երկրորդ մասի, մեր կարծիքով, առավել ուշագրավ գլուխները (12-17-րդ) նվիրված են Շահումյանի անկման պատճառների լուսաբանմանը:

1992 թ. մայիսյան փառավոր հաղթանակից (Շուշիի և Լաչինի ազատագրում) ընդամենը մեկ ամիս հետո մեր ինքնապաշտպանական ուժերը ծանր պարտություններ կրեցին, ընկավ Շահումյանը, տարհանվեց նրա բնակչությունը, որի արդյունքում կորցրինք Արցախի հյուսիսային դարպասները: Գրքում հանգամանորեն նկարագրված են աղբբեջանական հանկարծակի հարձակման մանրամասները: Շահումյանում տեղակայված ինքնապաշտպանական ջոկատները ֆիզիկապես ի վիճակի չէին դիմակայելու հակառակորդի բազմապատիկ անգամ գերակշռող ուժերին, մանավանդ որ աղբբեջանցիների կողմում կոչվում էին ռուսական բանակի մեծաթիվ զինվորներ և սպաներ, օգտագործվում էր այդ նույն բանակի ռազմավարության և մարտավարության ամբողջ զինանոցը:

Այս ամենով հանդերձ, Շահումյանի հրամանատարությանը հաջողվեց ռազմաճակատի տարբեր հատվածներում կազմակերպել համառ դիմադրություն (Բուզլուխ, Մանաշիդ, Կարաչինար): Ինքնապաշտպանական մարտերի մանրամասն նկարագրությամբ հեղինակը հիմնավորապես հերքում է այն ստահող գրպարտանքը, թե իբր՝ ճակատագրական այդ պահին Շահեն Մեղրյանը որոշել է առանց դիմադրության հանձնել Շահումյանը: Այս հերյուրանքները Շահենի հասցեին լայնորեն շրջանառության մեջ դրվեցին Հայաստանի որոշակի քաղաքական շրջանակների և պաշտոնական լրատվամիջոցների կողմից: Նպատակը մեկն էր՝ դաշնակցական Շահեն Մեղրյանի միջոցով վարկաբեկել Շահումյանի ինքնապաշտպանությանը և ընդհանրապես՝ Արցախյան ազատամարտին՝ իր անմնացորդ նվիրումը բերած ՀՅ Դաշնակցությանը: Նման սին մեղադրանքների սպառիչ պատասխանը ներկայացված է մասնավորապես Շահեն Մեղրյանի կողմից 1992 թ. հուլիսի 8-ին ՀՅԴ ԿԿ-ում տրված ասուլիսում: Պարզվում է, որ ռազմական չափազանց ծանր դրության մեջ հայտնված շահումյանցիները այդ օրերին բացարձակապես ոչ մի օգնություն չեն ստացել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Դարաբաղի իշխանություններից (ՀՀ պաշտպանության մախարարության կողմից խոստացված է եղել 30 հրասայլ և 2 հազար հետևակ, որոնք այդպես էլ տեղ չեն հասել):

Հեղինակը տեղի ունեցած ողբերգության մանրամասների, ինչպես նաև պետական, ռազմական և քաղաքական գործիչների տարաբնույթ մեկնաբանությունների համակողմանի քննության արդյունքում հանգել է հետևյալ եզրահանգումներին. **առաջին**՝ Շահումյանի անկման պատճառները կարելի է տեսնել նախ՝ Հայաստանում առկա քաղաքական ուժերի անհաշտելի հակասությունների, **երկրորդ**՝ Շահումյանը Արցախից դուրս դիտելու հատվածական մտածելակերպի և **երրորդ**՝ արտաքին հզոր ուժերի խարդավանքների, ստույգ՝ Պ. Հոբլի ծրագրի գործադրման փորձերի համատեքստում: Ինչ վերաբերում է առաջին պատճառին, ապա Հայաստանում նման իրավիճակ իսկապես գոյություն ունեցել է: Իշխող ՀՀԸ-ական վարչակարգը անհաշտ պայքար էր սկսել ՀՅԴ-ի դեմ և դա չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենալ Շահումյանում ծավալված ռազմական գործողությունների վրա, քանի որ Շահումյանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում ՀՅԴ-ն առանցքային դերակատարություն ուներ:

Միաժամանակ գրքում բերվում են բազմաթիվ փաստարկներ, որոնք ի ցույց են դնում Շահումյանը հանձնելու նպատակով ՀՀ առաջին նախագահի որդեգրած պարտովորական քաղաքականությունը: Ամենևին էլ չթերագնահատելով նման

փաստարկների կարևորությունը, կարծում ենք, սակայն, որ այս հիմնախնդրի հետ կապված շատ հարցեր դեռևս կարիք ունեն համակողմանի, խոր և օբյեկտիվ հետազոտության:

Մի բան պարզ է ու հստակ. կատարվածի համար առաջին հերթին պատասխանատու էր տվյալ ժամանակաշրջանի ՀՀ և ԼՂՀ քաղաքական ու ռազմական ղեկավարությունը: Եվ այն հանգամանքը, որ ՀՀ օրվան իշխանություններն ու որոշակի քաղաքական շրջանակներ ջանք ու եռանդ չխնայեցին Շահումյանի կորստյան մեղքը հանիրավի Շահեն Մեղրյանի (նույնն է՝ ՀՀԳ-ի) վրա բարդելու նպատակով, հուշում է այն մասին, որ նման եղանակով նրանք ցանկանում էին խուսափել սեփական ուսերին ընկած իրական պատասխանատվությունից:

Ինչ վերաբերում է Պ. Հոբլի տխրահռչակ ծրագրով տարածքների փոխանակման խնդրին, ապա քաղաքական նկատառումներով բազմիցս չարչրված այս թեմայի կապակցությամբ հեղինակի գնահատականները, մեր կարծիքով, ավելի հիմնավորված փաստարկների կարիք ունեն:

Ա. Պետրոսյանի գրքում Շահումյանի անկման պատճառների մասին տարբեր կարծիքներ են հայտնել մի շարք ռազմական և պետական-քաղաքական գործիչներ (Արկադի Տեր-Թադևոսյան, Վազգեն Մանուկյան, Արամ Գ. Սարգսյան և ուրիշներ), որոնք ևս այնքան էլ համահունչ չեն հեղինակի տեսակետների հետ: Սա նույնպես վկայում է, որ այս բարդ ու խճճված թեման հետագա ուսումնասիրության կարիք ունի:

Աշխատության եզրափակիչ՝ **երրորդ մասը** նվիրված է Շահեն Մեղրյան-հայրենասերի կողմից կազմակերպված և հաջողությամբ իրականացված պարտիզանական (հայդուկային) պայքարի պատմությանը: Նման պայքար մղելու վճիռը Շահենը կայացրել է Հաբերքում 1992 թ. հունիսին՝ Շահումյանի անկումից ընդամենը մի քանի օր անց: Դրանից հետո ՀՀԳ-Հայաստանի Կենտրոնական կոմիտեն որոշում կայացրեց համակողմանի զորակցություն ցույց տալ ծավալվող շարժմանը: Պարտիզանական ջոկատները, որոնց «Եղնիկներ» էին անվանում, հայդուկապետ Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ իրականացրին մի շարք փայլուն ռազմական գործողություններ՝ ջախջախիչ պարտության մատնելով թշնամուն: Դրանց մեջ հատկապես առանձնանում է 1993 թ. փետրվարին «Եղնիկների» կողմից Ադրբեջանի բանակի Գերանբոյի գումարտակին հասցված խայտառակ պարտությունը, որին նվիրված է ռուս հայտնի լրագրող Բորիս Նևզովի «Գերանբոյի գումարտակը» կինոֆիլմը:

Թշնամու թիկունքում գործող «Եղնիկների» ջոկատը կարճ ժամանակում թվապես աճեց՝ հասնելով մի քանի հարյուր մարտիկի: Բացի ռազմական գործողություններից, պարտիզանները իրականացնում էին ականապատման և ականագերծման, ինչպես նաև հետախուզական աշխատանքներ՝ ձեռք բերելով տեղեկություններ հակառակորդի տեխնիկայի և զինուժի վերաբերյալ: Հեղինակը միանգամայն տեղին է արժևորում հայդուկային կռիվների կարևոր նշանակությունը 1993-1994 թթ. ռազմական գործողությունների ընդհանուր համատեքստում: Ուստի պատահական չէ, որ 1993 թ. մարտի 11-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով Շահումյանի պարտիզանական ջոկատի հիմքի վրա կազմավորվեց ՀՀ ՊՆ Հատուկ նշանակության ջոկատը:

1993 թ. գարնանը «Եղնիկները» շարունակում էին իրենց հանդուգն ռազմական գործողությունները: Հաջողությամբ իրականացվեցին Տոնաշենի, Թալիշի և

ԳՐԱԽՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Գ. (Թ) գառի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011
վեյ համահայկական հանդես

Շահեն Մեղրյանի ծննդավայր Գյուլիստանի ազատագրման ծրագրերը: Մակայն նույն թվականի ապրիլի 17-ը ճակատագրական դարձավ մեծ հայդուկապետի կյանքում. Շահենին և նրա զինակից ընկերներին Երևան տեղափոխող ուղղաթիռը հրթիռակոծվեց Շահումյանի երկնքում՝ թռիչքից ընդամենը մի քանի րոպե անց: Չոհվեցին բոլորը: Տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ աշխատության հեղինակը կասկած է հայտնում, որ «Շահեն Մեղրեանի մահը ոչ թե թուրքի ձեռքի գործ է, այլ կանխամեռ սպանություն»¹:

Այս տեսակետը հիմնավորելու համար Ա. Պետրոսյանը բերում է մի քանի փաստարկներ: **Նախ**՝ Շահեն Մեղրյանի դեմ մահափորձ արդեն կատարվել էր 1991 թվականին, **երկրորդ**՝ ամենևին էլ պատահական չպետք է համարել երեք ուղղաթիռների կործանումը՝ 1991, 1992 և 1993 թվականներին, որոնց մեջ ամեն անգամ եղել է Մեղրյան ազգանվամբ մի հոգի՝ Պետրոս, Պողոս, Շահեն², **երրորդ**՝ Շահենի ուղղաթիռը հրթիռակոծվել է այն տարածքում, որը վերահսկվում էր ոչ թե թշնամու, այլ պարտիզանների կողմից:

Չցանկանալով կասկածի տակ դնել հեղինակի վերոնշյալ հիմնավորումները, ուղղակի փաստենք, որ պատերազմական իրադրությունը ունի իր գրված և չգրված օրենքները և մման պայմաններում հնարավոր է ցանկացած ոճիրի իրագործում: Շահեն Մեղրյանը իր բուռն գործունեության ընթացքում ձեռք էր բերել համախոհների հսկայական բանակ, ցավոք նաև՝ հակառակորդներ, որոնք օգտագործում էին ցանկացած առիթ այդ անձնվեր գործչի բարոյական նկարագիրը սևացնելու, նրա անձի շուրջ զանազան բանասրկություններ տարածելու համար: Այդուհանդերձ, ուզում ենք հավատալ, որ յուրայինի ձեռքը չի գնացել մման ստոր քայլի և Շահենը նահատակվել է թշնամու արձակած հրթիռից:

Աշխատության վերջին՝ 22-րդ գլխում հեղինակը ներկայացրել է Շահեն Մեղրյանի ընկերների և զինակիցների կարծիքները մեծ հայդուկապետի մասին, որոնք ամբողջացնում, իմաստավորում և ըստ արժանվույն են գնահատում նրա անցած մարտական ուղին:

Վերջում Ա. Պետրոսյանի «Մեծն Շահեն» աշխատության վերաբերյալ կցանկանայինք արտահայտել հետևյալ նկատառումները:

Առաջին՝ հեղինակը ընթերցող լայն շրջանակների սեղանին է դրել լայնածավալ մի ուսումնասիրություն, որը ոչ միայն Շահեն Մեղրյանի կյանքի ու գործունեության, այլև Արցախյան գոյամարտի բաղկացուցիչ մասը կազմող Շահումյանի հերոսամարտի պատմության լուսաբանման առաջին ամբողջական փորձն է:

Երկրորդ՝ Աշոտ Պետրոսյանին հաջողվել է հիմնավորված կերպով ցույց տալ Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական և պարտիզանական կռիվների տեղն ու դերը Արցախյան պատերազմում ձեռք բերված հաղթանակի գործում:

Երրորդ՝ մենագրության հեղինակը, հենվելով փաստագրական հարուստ նյութերի վրա, արտահայտել է իր հստակ (երբեմն նաև՝ վիճահարույց) դիրքորոշումները Շահումյանի շրջանի կորստյան պատճառների վերաբերյալ:

Չորրորդ՝ առանձնապես գնահատելի է Ա. Պետրոսյանի անկոտրում հավատն առ այն, որ Շահումյանը ազատագրված տեսնելու Շահեն Մեղրյանի բաղձալի երազանքը մնում է մեր պետականության քաղաքական օրակարգում և իրականություն է դառնալու տեսանելի ապագայում:

¹ Աշոտ Պետրոսեան, Մեծն Շահեն, Եր., Գեղինակային հրատ., 2011, էջ 552:
² Տե՛ս նույն տեղում, էջ 555:

Համոզված ենք՝ հեղինակի հետագա ուսումնասիրություններն ավելի հիմնավորված և անհերքելի պատասխաններ կտան այն կարևոր հարցերին, որոնց նկատմամբ արտահայտել ենք մեր վերապահումները:

Արտավազդ Գ. Դարբինյան
Պատմ. գիտ. թեկնածու

**ASHOT PETROSYAN, SHAHEN THE GREAT, Yerevan, Author's
Publication, 2011, 732 pages**

Artavazd G. Darbinyan

ԳՐԱԽՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. (Թ) փարի, թիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011

ՎԷՄ համահայկական հանդես